Հ Ր Ա Մ Ա Ն N 303-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«05» ՀՈՒՆԻՍԻ 2023 Թ. **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 187-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազդարարման համակարգի մասին» օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 1-ին կետը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ նշանակել Արդարադատության նախարարության վերահսկողական վարչության պետին:

2. Քրեակատարողական ծառայության և Հարկադիր կատարումն ապահովող ծառայության պետերին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում համապատասխան ծառայություններում ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար նշանակել պատասխանատու անձանց:

3. Արդարադատության նախարարի մամուլի քարտուղարին՝ կազմակերպել պատասխանատու անձանց վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը նախարարության պաշտոնական կայքէջում:

4. Ուժը կորցրած ճանաչել Արդարադատության նախարարի 2018 թվականի մայիսի 11-ի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձանց նշանակելու մասին» N 187-Լ հրամանը:

Invalid signature

X

Grigor Minasyan

Signed by: MINASYAN GRIGOR 3312830419

ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍՅԱՆ